

**ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**  
**ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ**  
**ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

**ՈՐՈՇՈՒՄ N 34/7**

ք.Երևան

19 հունիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ Ա/Ձ Էդվարդ Վարդանյանի դիմում-բողոքը՝

**ՊԱՐԶԵՑ**

**1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները**

Էդվարդ Վարդանյանը հայտնում է, որ 2018թ. ապրիլի 11-ին կրկին հաշվառվել է որպես անհատ ձեռնարկատեր: Գործունեության հիմնական նպատակը սարի ծաղիկներ, դեղաբույսեր հավաքելն ու վաճառքն է: Նախորդ տարիներին գործունեություն չի իրականացրել, շրջանառություն չի ունեցել և կարծել է, որ կրկին հաշվառվում է որպես Օ-ական գործունեություն իրականացնող և կարող է, որպես փոքր հարկ վճարող, շրջանառության հարկ վճարող համարվել: Ընդ որում, մինչ սույն դիմումի ներկայացնելը որևիցե գործունեություն չի իրականացրել, սակայն հետագայում պարզել է, որ 20-օրյա ժամկետում պետք է ներկայացնել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

Կախված իր գործունեության բնույթից Էդվարդ Վարդանյանը նշում է, որ ԱԱՀ-ով հարկման դաշտում չի կարող աշխատել և ստիպված պետք է դադարեցնի գործունեությունը:

Ելնելով վերոգրյալից՝ Էդվարդ Վարդանյանը խնդրում է իրեն համարել շրջանառության հարկ վճարող:

**2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

Ա/Ձ Էդվարդ Վարդանյանը ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում պետական գրանցում է ստացել 11.04.2018թ.:

Ա/Ձ Էդվարդ Վարդանյանի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել 2018թ. շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը, որի հետևանքով նա համարվել է ԱԱՀ վճարող:

**3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ**

ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված է, որ շրջանառության հարկ վճարողներ են համարվում (անկախ բացառապես արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակներ իրականացնելու հանգամանքից) նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանը

բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները (բացառությամբ նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի) հարկային տարվա ընթացքում պետական գրանցում ստացած առևտրային կազմակերպությունը կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված կամ որպես նոտար նշանակված ֆիզիկական անձը՝ համապատասխանաբար, որպես կազմակերպություն պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե հարկ վճարողը մինչև համապատասխանաբար՝ որպես կազմակերպություն պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ:

Քննարկվող դեպքում Ա/Ձ էդվարդ Վարդանյանի կողմից սահմանված կարգով և ժամկետում հարկային մարմին չի ներկայացվել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն, հետևապես 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող չի կարող համարվել:

Միևնույն ժամանակ, ներկայացված դիմում-բողոքում չի ներկայացվել հիմնավոր փաստարկ (ապացույց)՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունը սահմանված ժամկետում չներկայացնելու պատճառների վերաբերյալ:

#### 4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Ա/Ձ էդվարդ Վարդանյանի դիմում-բողոքը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ